ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **22/12/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա էին՝ Էդուարդ Բաբայանը, Մելինե Գասպարյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Չոբանյանը, Արամ Զաքարյանը, Եղիշե Ավետիսյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Դավիթ Զարոյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի հինգերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին.
2) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան

համայնքում տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.
3) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.
4) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարների չափը սահմանելու մասին.
5) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրվող բնակելի և ոչ բնակելի տարածքների վարձավճարների չափը սահմանելու մասին.
6) 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին.
7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար հաստատելու մասին.
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար հաստատելու մասին.
9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին.
11) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 47-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
12) «Ջիէնսի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերության սեփականություն հանդիսացող 0.14072 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
13) Արման Ոսկանյանի սեփականություն հանդիսացող 0.05 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
14) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0321-0028 կադաստրային ծածկագրով 0.05 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
15) Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 18/9 հասցեում գտնվող 0.3 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
16) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղի 1-ին փողոցի 2/1 հասցեում գտնվող հողամասի մասերի նպատակային նշանակությունները փոփոխելու մասին.
17) «ԷԼԻՏ ՓՐՈՋԵՔԹ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.
18) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 1/124 հասցեում գտնվող հողամասն Անթառամ Սեդրակյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
19) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 72/1 հասցեում գտնվող հողամասն ուղղակի

վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
20) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի թիվ 61/1 հասցեում գտնվող հողամասն Արշակ Մխիթարյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
21) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0153-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու մասին.
22) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
23) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին.
24) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն աճուրդային կարգով օտարելու մասին.
25) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.
26) Հարություն Մեհրիբանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
27) Արման Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
28) Ջիվան Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
29) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 7 շենքի թիվ 80, 81 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
30) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի 8 շենքի թիվ 65 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
31) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Դարանի փողոցի 5 շենքի թիվ 34 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
32) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Բալահովիտ գյուղի Լ. Ավետիսյան փողոցի 61 շենքի թիվ 404 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
33) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 6 շենքի թիվ 5 բնակարանն անհատույց օտարելու մասին.
34) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի թիվ 52 բնակարանն անհատույց օտարելու մասին.
35) Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 06-ի N 24-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին.
36) Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց կառուցապատման

իրավունքով տրամադրված և կառուցապատված անշարժ գույքերն առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելուն կամ կառուցապատման ժամկետը երկարացնելուն համաձայնություն տալու մասին.
37) Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքից վարձակալության իրավունքով տարածք տրամադրելու մասին.
38) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին.
39) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
40) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 203-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
41) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 17-րդ, 18-րդ, 29-րդ և 37-րդ հարցերը, ինչպես նաև 22-րդ հարցի հավելվածի 19-րդ տողը հանել օրակարգից:

Օրակարգը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 196-Ա/

Լսեցին
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը 2024 թվականի համար՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 197-Ն/

Լսեցին

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ,
14-րդ և 16-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները 2024 թվականի համար՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող,բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի)նախապատրաստման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 (հազար) դրամ.

7) ջրմուղ-կոյուղու համար,որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում,

ջրամատակարարման և ջրահեռացման համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Գեղաշեն գյուղում բնակելի տնտեսության յուրաքանչյուր ծորակի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ, իսկ արտադրական տնտեսության յուրաքանչյուր ծորակի համար 3 000 (երեք հազար)դրամ,Կամարիս գյուղում՝ բնակելի և արտադրական տնտեսությունների համար յուրաքանչյուր ծորակի համար՝ 1 500 (հազար հինգ հարյուր)դրամ՝ մայիսից սեպտեմբեր ամիսների համար.

8) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մեկ քառակուսի մետրի համար փոխհատուցման վճար՝ ամսական 10 (տասը) դրամ.

9) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ 1 000 (հազար)դրամ.

10) համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները ՝ համաձայն հավելված 1-ի.

11) համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման համար Աբովյան համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվության համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի.

12) Համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը և արտոնությունները՝ համաձայն հավելված 3-ի.

13) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը և արտոնությունները՝համաձայն հավելված 4-ի.

14) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը և արտոնությունները՝ համաձայն հավելված 5-ի.

15) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի նկատմամբ կիրառել զրոյական դրույքաչափ:

16) Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն»համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը և արտոնությունները՝ համաձայն հավելված 6-ի.

17) «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակութային կենտրոն» հիմնարկի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը և

արտոնությունները՝ համաձայն հավելված 7-ի.
18) Աբովյան համայնքի «Կամարիս գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը և արտոնությունները՝ համաձայն հավելված 8-ի:
19) Համայնքի բնակավայրերն սպասարկողան ասնաբույժի ծառայությունների դիմաց՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 (հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Քննարկում ծավալվեց «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ և «Աբովյան քաղաքի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ 2024 թվականի սեպտեմբերի 01-ից նոր ընդունվող երեխաների համար վարձավճարի չափի վերաբերյալ և առաջարկվեց վարձավճարի չափը սահմանել 5 000 (հինգ հազար) դրամ:

Հարցը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 198-Ն/

Լսեցին
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Սահմանել Աբովյան համայնքում հասցեների տրամադրման ծառայության վճար՝ 10000 (տասը հազար) դրամ:
2. Սահմանել Աբովյան համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար՝ ամսական 500 (հինգ հարյուր) դրամ, իսկ յուրաքանչյուր հենասյան 1 լարանցման համար՝ ամսական 300 (երեք հարյուր):
3. Սահմանել Աբովյան համայնքի վարչական տարածքում մալուխային գետնանցումների համար՝ 1 գծամետրի համար 50 (հիսուն) դրամ:

4. Սահմանել տաքսիների, միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների համար Աբովյան համայնքի ավտոկանգառներից օգտվելու ծառայության վճար՝ ամսական 3 000 (երեք հազար) դրամ՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար:
5. Սահմանել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վճարները՝ համաձայն հավելված 1-ի:
6. Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Գագիկ Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն», Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» և «Երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճը և նախասրահը օգտագործման տրամադրելու համար՝ 1 ժամվա վճարը սահմանել 30 000 (երեսուն հազար) դրամ:
7. Աբովյան համայնքի «Գեղաշեն գյուղի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճը օգտագործման տրամադրելու համար՝ 1 օրվա վճարը սահմանել 20 000 (քսան հազար) դրամ:
8. «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան քաղաքի գերեզմանատների պահպանման և սպասարկման ծառայության վճարը յուրաքանչյուր հուղարկավորության համար սահմանել՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ:
9. Սահմանել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի բազմահարկ շենքերի վերելակների սպասարկման ամսական վճարների չափը՝ համաձայն հավելված 2-ի:
10. Սահմանել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի բազմահարկ շենքերի վերելակների տեխնիկական զննման տարեկան վճարների չափը՝ համաձայն հավելված 3-ի:
11. «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ոռոգման ջուր տրամադրելու ծառայության վճարը սահմանել հողամասի 1 քառակուսի մետրի համար՝ սեզոնում 20 (քսան) դրամ:
12. Սահմանել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման կամ օգտագործման տրամադրման փաստաթղթերի (փաթեթի) կազմման համար ծառայության վճար՝ համաձայն հավելված 4-ի:
13. Սահմանել Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար՝ համաձայն հավելված 5-ի:
14. Սահմանել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական մեքենաները օգտագործման տրամադրելու վճար՝ համաձայն հավելված 6-ի:
15. Սույն որոշման 5-8-րդ կետերով սահմանված վճարների համար կիրառել դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ վճարի 50-ից 100 տոկոսի չափով:
16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 199-Ն/

Լսեցին
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հողային օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 8-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2024 թվականի համար սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 200-Ն/

Լսեցին
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրվող բնակելի տարածքների ամսական վարձավճարի չափը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 6 (վեց) դրամ:
2. 2024 թվականի համար սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրվող ոչ բնակելի տարածքների վարձավճարների ամսական չափը մեկ քառակուսի մետրի

համար՝ համաձայն հավելվածի:
3. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրվող ավտոտնակների վարձավճարների տարեկան չափը մեկ քառակուսի մետրի համար ս ահմանել 400 (չորս հարյուր) դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Քննարկում ծավալվեց 2024 թվականի համար Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության տրվող ոչ բնակելի տարածքների վարձավճարների ամսական չափի վերաբերյալ: Առաջարկվեց հավելվածով ներկայացված վարձավճարի չափը բարձրացնել:
Վ. Բաբաջանյանն առաջարկեց վարձավճարի բարձրացման հարցը թողնել հաջորդ տարվան՝ համապատասխան մարմիններին նախապես ծանուցելուց հետո՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2024 թվականի համար միջնաժամկետ և բյուջետային պլանավորման գործընթացներն ավարտվել են: Առաջարկն ընդունվեց և հարցը դրվեց քվեարկության առանց փոփոխության:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 201-Ն/

Լսեցին
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 28-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին
որոշում է՝
1. 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 710 000 (յոթ հարյուր տաս հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 202-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար՝ համաձայն հավելվածի:
2. Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու դեպքում սահմանել հավելավճար՝ իրենց պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 203-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար՝ համաձայն 1-25 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Հարցի վերաբերյալ ծավալվեց քննարկում, առաջարկվեց «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և «Առինջ համայնքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը միավորել և ստեղծել մեկ ՀՈԱԿ՝ ֆինանսական միջոցները տնտեսելու նպատակով:
Դ. Զարոյանն առաջարկեց հարցի քննարկմանն անդրադառնալ 2024 թվականի 2-րդ կիսամյակում՝ ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի մեկնարկից հետո, ինպես նաև առաջարկեց հարցի վերաբերյալ ներկայացնել գրավոր առաջարկություններ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 204-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեն՝
1) եկամուտների գծով՝ 5 489 488.0 հազար դրամ.
2) ծախսերի գծով՝ 5 489 488.0 հազար դրամ.
3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ:
2. Աբովյան համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 0.0 հազար դրամ:
3. Հաստատել Աբովյան համայնքի՝
1) բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի.
2) բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի.
3) բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի.
4) բյուջեի միջոցների հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հավելված 4-ի.
5) բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի.
6) բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:

4. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 %-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Օրակարգը ներկայացնելու ժամանակ Վ. Բաբաջանյանը հայտնեց, որ այս հարցի վերաբերյալ դեռևս չի ստացվել ՀՀ Արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությունը, սակայն նախարարությունից աշխատանքային կարգով ստացված տեղեկության համաձայն նախագծի վերաբերյալ բովանդակային առարկություններ և առաջարկություններ չունեն:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 205-Ն/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքի կառավարման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 206-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ԶԱՔԱՐՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 01/04/06790-2023 գրությունը (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 20-ի N Պ-2327) Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Աբովյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 47-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 207-Ա/

Լսեցին

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.14072 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի, հաշվի առնելով «Ջիէնսի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերության լիազորած անձ Հայկ Հայրապետյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 23-ի N S-1802) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 1/փ-441 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. «Ջիէնսի-Ալֆա» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի օգոստոսի 30-ի N 30082023-07-0003 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-018-0125-0032) Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղում գտնվող 0.14072 հեկտար մակերեսով բնակավայրերի

նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության էներգետիկայի հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 12-16-րդ ենթակետերում ներառված հարցերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 208-Ա/

Լսեցին
ԱՐՄԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.05 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 8-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի, հաշվի առնելով Արման Ոսկանյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 18-ի N Ք-6639) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 1/փ-435 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Արման Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 27-ի N 27072023-07-0087 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-023-0194-0056) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 0.05 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս:
2. Արման Ոսկանյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 610 500 (վեց հարյուր տասը հազար հինգ հարյուր) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Ոսկանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 209-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0321-0028 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.05 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով Անահիտ Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի սեպտեմբերի 29-ի N Ք-6189) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 21-ի N 112 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Անահիտ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի օգոստոսի 03-ի N 03082023-07-0150 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0321-0028 կադաստրային ծածկագրով 0.05 հեկտար մակերեսով հողամասի (վարելահող) նպատակային նշանակությունը փոփոխել որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամաս:
2. Անահիտ Պողոսյանը պարտավոր է 0.05 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակության փոփոխության համար Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 1 443 750 (մեկ միլիոն չորս հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 210-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.3

ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 1/փ-425 դրական եզրակացությունը, հաշվի առնելով Վահե Պողոսյանի լիազորած անձ Նարեկ Պողոսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 05-ի N Ք-6338), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Վահե Պողոսյանին պատկանող (հիմք՝ 2019 թվականի մայիսի 10-ի N 10052019-07-0054 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 18/9 հասցեում գտնվող 07-002-0040-0046 կադաստրային ծածկագրով 0.3 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գլխավոր հատակագծում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 211-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, հաշվի առնելով «Վիրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի դիմումը (մուտք՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ի N S-1613) և հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 22-ի N 118 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի

ավագանին ***որոշում է.***

1. «Վիրա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող (հիմք՝ 2004 թվականի դեկտեմբերի 09-ի N 1148135 վկայական) և Սուրեն Ասրիյանին պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 13-ի N 13062022-07-0138 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղի 1-ին փողոցի 2/1 հասցեում (հիմք՝ Աբովյան համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 12-ի N 1250 որոշում) գտնվող 1.75995 հեկտար փաստացի մակերեսով հողամասից 0.08898 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի և 0.00572 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունները փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 212-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 72/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և N 193-Ն որոշումների և հիմք ընդունելով Էմիլ Մելիքսեթյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ի N Ք-7755), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Էմիլ Մելիքսեթյանին և Լիլիթ Դանոյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի դեկտեմբերի 21-ի N 21122022-07-0159 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 72 հասցեում գտնվող 07-002-0025-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 510.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N 24102023-07-0074 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի 72/1 հասցեում գտնվող 07-002-0025-0237 կադաստրային ծածկագրով 134.0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի

կառուցապատման հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0025-0009 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատերեր Էմիլ Մելիքսեթյանին և Լիլիթ Դանոյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձիք պարտավոր են՝
1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 915 797 (ինը հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր իննսունյոթ) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.
2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 19-րդ և 20-րդ ենթակետերում ներառված հարցերը միաժամանակ դնել քվեարկության, քանի որ նույնաբովանդակ հարցեր են:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 213-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 61/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՇԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և N 193-Ն որոշումների և հիմք ընդունելով Արշակ Մխիթարյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ի N Ք-7733), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Արշակ Վարազդատի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի սեպտեմբերի 07-ի N 07092023-07-0031 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի 61 հասցեում գտնվող 07-002-0006-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի

նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 510.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի նոյեմբերի 10-ի N 10112023-07-0155 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի 61/1 հասցեում գտնվող 07-002-0006-0050 կադաստրային ծածկագրով 109.6 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0006-0012 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Արշակ Վարազդատի Մխիթարյանին:

2. Արշակ Վարազդատի Մխիթարյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 749 040 (յոթ հարյուր քառասունինը հազար քառասուն) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Արշակ Մխիթարյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արշակ Մխիթարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 214-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-013-0153-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 2019 թվականի ապրիլի 29-ին կնքված հողատարածքի վարձակալության մասին պայմանագրի 2.1.1.1-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասը Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար և չի համարվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս, հաշվի առնելով Սուրեն Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 03-ի N Ք-7150) Աբովյան համայնքի

ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2019 թվականի մարտի 04-ի N 04032019-07-0084 վկայական) Արամուս գյուղում գտնվող 07-013-0153-0005 կադաստրային ծածկագրով 5.0 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողը նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել Սուրեն Հրաչիկի Վարդանյանին:
2. Սուրեն Վարդանյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 7 975 000 (յոթ միլիոն ինը հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ՝ հողամասի գինը.
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սուրեն Վարդանյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուրեն Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվա հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 215-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2023 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի

Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ նախագծով ներկայացված հավելվածի 19-րդ տողում ներառված գույքը հանվել է ցանկից, քանի որ իրավասու մշտական հանձնաժողովի բոլոր անդամները դեմ են քվեարկել:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 216-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը՝

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը (հասցեն)	**Հողամասի մակերեսի չափը (քառ. մ.)**	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը	**Հողամասի օտարման մեկնարկային գինը (հազ. դրամ)**
1	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 372/1	10,7	07-002-0049-0820	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	175.0
2	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 2/477	19,4	07-002-0049-0817	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	315.0

3	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան 22/1	24,7	07-002-0058-0398	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	400.0
4	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան 8/1	60,0	07-002-0055-0134	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	971.0
5	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, թիվ 4/47	26,58	07-002-039-486	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	280.0
6	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, թիվ 4/46	26,58	07-002-039-472	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	280.0
7	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, թիվ 9	510,0	07-002-039-783	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2266.0
8	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, թիվ 10	510,0	07-002-039-782	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2266.0
9	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, թիվ 8	510,0	07-002-039-739	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2266.0
10	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, թիվ 7	510,0	07-002-039-738	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2266.0
11	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, թիվ 6	510,0	07-002-039-769	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2266.0
12	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, թիվ 5	510,0	07-002-039-768	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2266.0
13	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս, թիվ 84	510,0	07-002-039-399	բնակավայրերի	տնամերձ	2266.0
14	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ միկրոշրջան, 1-ին թաղամաս, թիվ 62	511,5	07-002-039-360	բնակավայրերի	տնամերձ	2275.0
15	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամաս 148/1	510,0	07-002-0030-0184	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3490.0
16	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամաս 19/1	66,1	07-002-0007-0090	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	455.0

17	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս 111/1	39,8	07-002-0005-0043	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	275.0
18	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Է. Պետրոսյան փողոց 1/37	161,3	07-002-0048-0206	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	720.0
19	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Է. Պետրոսյան փողոց 1/36	942,0	07-002-0048-0205	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	4185.0
20	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 49/1	3,9	07-002-0065-0172	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	65.0
21	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Գառնու փողոց 8/12	37,4	07-002-0082-0474	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	400.0
22	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երևանյան փողոց 80	90,0	07-002-0148-0083	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	400.0
23	Համայնք Աբովյան, գ. Առինջ Խ. Աբովյան թաղամասի 10-րդ փողոց 43	1059,2	07-011-0371-0027	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	11140.0
24	Համայնք Աբովյան, գ. Առինջ Պ. Սևակի թաղամասի 6-րդ փողոց 56	2993,0	07-011-0407-0010	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	31470.0
25	Համայնք Աբովյան, գ. Առինջ Ա. Մնացականյան փողոց 21/5	53,8	07-011-0001-0109	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	871.0
26	Համայնք Աբովյան, գ. Բալահովիտ 4-րդ փողոց 14/4	2209,9	07-018-0111-0058	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	15105.0
27	Համայնք Աբովյան, գ. Բալահովիտ 4-րդ փողոց 14/5	800,0	07-018-0111-0059	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	5470.0
28	Համայնք Աբովյան, գ. Պտղնի	2680,0	07-054-0321-0031	գյուղատնտեսական	այլ հողատեսք	2000.0
29	Համայնք Աբովյան, գ. Առինջ Կ. Հովագիմյան փողոց 29/3	134.9	07-011-0176-0187	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2185.0
30	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ինտերնացիոնալ փողոց 1/12	23,2	07-002-0075-0078	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	380.0
31	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Կարմիր բանակի փողոց 7/1	2086,6	07-002-0134-0021	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	9270.0

32	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հանրապետության պողոտա 4/4	7,3	07-002-0070-0487	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	120.0
33	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 2/488	17,0	07-002-0049-0132	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	276.0
34	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան 15/10	24,4	07-002-0058-0400	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	395.0
35	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 4/63	18,0	07-002-039-598	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	190.0
36	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 4/64	20,63	07-002-039-569	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	217.0
37	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 9/61	19,8	07-002-036-069	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	140.0
38	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 9/62	19,8	07-002-036-068	բնակավայրերի	ավտոտնակի կառուցման	140.0
39	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 61/23	180,8	07-002-0039-1786	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1905.0
40	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս 16/1	191,6	07-002-0039-1764	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2015.0
41	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 61/10	118,5	07-002-0039-1779	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1250.0
42	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջանի 1-ին թաղամաս 67/1	110,0	07-002-0011-0028	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	760.0
43	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սևանի փողոց 2/13	23,2	07-002-0049-0818	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	380.0
44	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 2-րդ թաղամաս թիվ 100	540,18	07-002-036-268	բնակավայրերի	տնամերձ	3700.0
45	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հանրակացարանային թաղամաս 4/1	510,6	07-002-0116-0453	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3500.0
46	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ռոսիայի փողոց 25/1	242,0	07-002-0066-0337	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3920.0
47	Համայնք Աբովյան, գ. Առինջ Պ. Դուրյան	369,8	07-011-0410-0038	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3900.0

	թաղամասի 8-րդ փողոց 34/1					
48	Համայնք Աբովյան, գ. Վերին Պտղնի Սևան-Երևան մայրուղի 2-3կմ 22/3	111,1	07-062-0039-0054	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	1800.0
49	Համայնք Աբովյան, գ. Արամուս	8650,1	07-013-0247-0001	գյուղատնտեսական	այլ հողատեսք	4000.0
50	Համայնք Աբովյան, գ. Առինջ Ա թաղամասի 3-րդ փողոց 1/2	35,7	07-011-0050-0259	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	380.0
51	Համայնք Աբովյան, գ. Առինջ 27-րդ փողոց 3	1270,0	07-011-0053-0025	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	13360.0
52	Համայնք Աբովյան, գ. Առինջ Պ. Սևակի թաղամասի 8-րդ փողոց 5/1	83,83	07-011-0397-0045	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1360.0
53	Համայնք Աբովյան, գ. Առինջ Վ. Տերյան թաղամասի 2-րդ փողոց 20/1	113,62	07-011-0155-0026	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1200.0
54	Համայնք Աբովյան, գ. Առինջ Դուրյան թաղամաս 6-րդ փողոց 38/1	134,3	07-011-0050-0339	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2175.0
55	Համայնք Աբովյան, գ. Առինջ Մ. Մկրտչյան թաղամասի 14-րդ փողոց 9	2896,0	07-011-0261-0011	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	30450.0
56	Համայնք Աբովյան, գ. Առինջ Մ. Մկրտչյան թաղամասի 19-րդ փողոց 35	1310,1	07-011-0262-0011	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	13780.0
57	Համայնք Աբովյան, գ. Առինջ Բ թաղամասի 3-րդ փողոց 4	630,0	07-011-0219-0002	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	6630.0
58	Համայնք Աբովյան, գ. Առինջ Մ. Մկրտչյան թաղամասի 23-րդ փողոց 4	8794,0	07-011-0262-0001	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	92500.0
59	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան 2/602	32,0	07-002-0049-0759	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	520.0
60	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ռոսիայի 14/6	31,85	07-002-0669-0339	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	520.0
61	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երիտասարդական փողոց 5/13	24,0	07-002-0089-0384	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	260.0

62	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 14/6	401,1	07-002-0103-0222	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	1785.0
63	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս 94	525,0	07-002-039-827	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2340.0
64	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 5-րդ միկրոշրջան 1-ին թաղամաս 96	525,0	07-002-039-826	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2340.0
65	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 6-րդ միկրոշրջան 2-րդ թաղամաս թիվ 10	514,25	07-002-039-303	բնակավայրերի	տնամերձ	2300.0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-13 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 217-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-13 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 218-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 481-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերը համարվում են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2024 թվականի ընթացքում մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 219-Ա/

Լսեցին

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԵՀՐԻԲԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և 193-Ն որոշումների, հաշվի առնելով Հարություն Մեհրիբանյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 29-ի N Ք-7819) Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հարություն Մեհրիբանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2012 թվականի հուլիսի 31-ի N 31072012-07-0100 վկայական) Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 22/2 հասցեում գտնվող 16.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 28-ի N 28042023-07-0257 վկայական) Աբովյան քաղաքի Շուշի թաղամասի թիվ 12 հասցեում գտնվող 16.0 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հետ:

2. Հարություն Մեհրիբանյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հարություն Մեհրիբանյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Մեհրիբանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 220-Ա/

Լսեցին
ԱՐՄԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և 193-Ն որոշումների, հաշվի առնելով Արման Հարությունյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հուլիսի 11-ի N Ք-4127), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Համաձայնություն տալ Արման Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի փետրվարի 22-ի N 22022023-07-0051 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Պիոներական փողոցի թիվ 1/9/1 հասցեում գտնվող 26.55 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի մայիսի 12-ի N 12052023-07-0219 վկայական) Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի Երևան-Աբովյան խճուղու 1-ին փակուղու թիվ 2/5 հասցեում գտնվող 30.0 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի հետ:
2. Արման Հարությունյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արման Հարությունյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արման Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 221-Ա/

Լսեցին

ՋԻՎԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և 193-Ն որոշումների, հաշվի առնելով Ջիվան Զարգարյանի դիմումը (մուտք՝ 2023թվականի դեկտեմբերի 05-ի N Ք-7986) Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Համաձայնություն տալ Ջիվան Զարգարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի ապրիլի 20-ի N 20042018-07-0030 վկայական) Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 1/67/2 հասցեում գտնվող 58.2 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասի փոխանակմանը Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի դեկտեմբերի 02-ի N 12122022-07-0044 վկայական) Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 102/2 հասցեում գտնվող 124.2 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հետ:
2. Ջիվան Զարգարյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ջիվան Զարգարյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջիվան Զարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 222-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 8 ՇԵՆՔԻ ԹԻՎ 65 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 193-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի սեպտեմբերի 04-ի թիվ «340Ա-Վ/023» անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 2 420 000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Գեղամ Մարգարյանի ընտանիքը 1978 թվականից բնակվում է Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի 8 շենքի թիվ 65 բնակարանում, սակայն ընտանեկան հանգամանքներից ելնելով այն չի սեփականացրել, հիմք ընդունելով Գեղամ Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N Ք-6818), Աբովյան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2015 թվականի նոյեմբերի 17-ի N 17112015-07-0169 վկայական) Աբովյան քաղաքի Բարեկամության փողոցի 8 շենքի 69.05 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 65 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 2 420 000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամով, օտարել Գեղամ Մարգարյանին:
2. Գեղամ Մարգարյանը պարտավոր է վճարել.
1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 2 420 000 (երկու միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամ՝ բնակարանի գինը,
2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:
3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գեղամ Մարգարյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գեղամ Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 223-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՐԱՆԻ ՓՈՂՈՑԻ 5 ՇԵՆՔԻ ԹԻՎ 34 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 193-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի սեպտեմբերի 04-ի թիվ «340Բ-Վ/023» անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամ, նկատի ունենալով, որ Էլիշկա Մանուկյանը 1986 թվականից հաշվառված բնակվում է Աբովյան քաղաքի Դարանի փողոցի 5 շենքի թիվ 34 բնակարանում, հիմք ընդունելով Էլիշկա Մանուկյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի նոյեմբերի 01-ի N Ք-7083), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հունիսի 08-ի N 08062023-07-0156 վկայական) Աբովյան քաղաքի Դարանի փողոցի 5 շենքի 55.42 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 34 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամով, օտարել Էլիշկա Մանուկյանին:
2. Էլիշկա Մանուկյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) դրամ՝ բնակարանի գինը,

2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:

3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Էլիշկա Մանուկյանի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էլիշկա Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 224-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 61 ՇԵՆՔԻ ԹԻՎ 404 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 193-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ «383-Վ/023» անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 900 000 (ինը հարյուր հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Էդգար Հովհաննիսյանը 2003 թվականից բնակվում է Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի Լ. Ավետիսյան փողոցի 61 շենքի թիվ 404 բնակարանում, սակայն ընտանեկան հանգամանքներից ելնելով այն չի սեփականացրել, հիմք ընդունելով Էդգար Հովհաննիսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N Ք-6943), Աբովյան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հունիսի 26-ի N 26062023-07-0066 վկայական) Բալահովիտ գյուղի Լ. Ավետիսյան փողոցի 61 շենքի 27.24 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 404 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 900 000 (ինը հարյուր հազար) դրամով, օտարել Էդգար, Սվետլանա, Աշոտ Հովհաննիսյաններին և Աստղիկ Կիտուրյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են վճարել.
1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 900 000 (ինը հարյուր հազար) դրամ՝ բնակարանի գինը,
2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:
3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ ավագանու մշտական հանձնաժողովը հարցը թողել է ավագանու նիստի քննարկմանը:

Քննարկում ծավալվեց բնակարանի կենցաղային պայմանների, ինչպես նաև Էդգար Հովհաննիսյանի և նրա ընտանիքի վերոնշյալ բնակարանում բնակվելու վերաբերյալ: Պարզաբանում ներկայացրեց նաև Բալահովիտ բնակավայրի վարչական ղեկավար Գևորգ Հակոբյանը:

Կողմ-13 Դեմ-8 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 225-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ 6 ՇԵՆՔԻ ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 3-ի N 198 որոշման, հաշվի առնելով Լուսինե Վահանյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N Ք-8225), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 27122022-07-0204 վկայական) Աբովյան քաղաքի Հանրակացարանային թաղամասի 6 շենքի 14.0 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 5 բնակարանն անհատույց օտարել Լուսինե Վահանյանին:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Լուսինե Վահանյանi կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Վահանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 226-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 52 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 20-ի N 451 որոշման, հաշվի առնելով Վլադիմիր Պետրոսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 08-ի N Ք-8123), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 20-ի N 20072023-07-0168 վկայական) Աբովյան քաղաքի Հանրապետության

պողոտայի 7 շենքի 13.75 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 52 բնակարանն անհատույց օտարել Վլադիմիր Պետրոսյանին և Անահիտ Ալիխանյանին:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 227-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 06-Ի N 24-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 06-ի N 24-Ա որոշումը, հիմք ընդունելով Ռուզաննա Ճաղարյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 06-ի N Ք-8031), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝
1. Համաձայնություն տալ Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 06-ի «Աբովյանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Սևանի փողոցի 2/1 շենքի թիվ 4 բնակարանի երկու ննջասենյակները և ընդհանուր օգտագործման բաժանմունքների կեսը ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 24-Ա որոշմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուզաննա Ճաղարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հարցի վերաբերյալ ծավալվեց քննարկում և որոշվեց հարցը քննարկել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից համապատասխան հիմքեր ստանալուց հետո:

Կողմ-0 Դեմ-21 Ձեռնպահ-0
Որոշումը չի ընդունվել:

Լսեցին

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ինմասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետի զեկուցագիրը (մուտք՝ 2023 թվականի դեկտեմբերի 1-ի ՆՔ-7925), Աբովյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝

1) քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց կառուցապատման իրավունքով տրամադրված և կառուցապատված անշարժ գույքերը, որոնց նկատմամբ գրանցված է եղել քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կառուցապատման իրավունքը և որոնք օտարման պահին ընդգրկված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, առանց մրցույթի՝ սահմանելով նախապատվության իրավունք, գնահատված տարեկան վարձավճարի չափով, 10 (տասը) տարի ժամկետով կառուցապատողներին տրամադրելու,

2) 20 տարով կնքել /երկարաձգել/ քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց կառուցապատման իրավունքով տրամադրված՝ կառուցապատված, պայմանագրերի ժամկետը, որոնք ընդգրկված են Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

2. Աբովյան համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետի պահանջները բավարարող դիմումների հիման վրա կազմել փաթեթ և ներկայացնել Աբովյան համայնքի ավագանուն՝ համապատասխան որոշում կայացնելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 228-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 336-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ փոփոխությունները և լրացումները կատարելու համար՝

1) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի 2-րդ (ծածկագիր՝ 2.1-2) կետում «քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերը փոխարինել «քաղաքաշինության և հողաշինարարության» բառերով.

2) 6-րդ (ծածկագիր՝ 2.1-6) կետից հանել «զարգացման ծրագրերի և» բառերը

3) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախումբը լրացնել նոր 9-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետ» (ծածկագիր՝ 2.1-9) կետով.

4) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբի 2-րդ (ծածկագիր՝ 2.2-2) կետում «քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերը փոխարինել «քաղաքաշինության և հողաշինարարության» բառերով.

5) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբի 3-րդ (ծածկագիր՝ 2.3-3), 4-րդ (ծածկագիր՝ 2.3-4), 5-րդ (ծածկագիր՝ 2.3-5), 6-րդ (ծածկագիր՝ 2.3-6), 7-րդ (ծածկագիր՝ 2.3-7), 8-րդ (ծածկագիր՝ 2.3-8), 9-րդ (ծածկագիր՝ 2.3-9), 21-րդ (ծածկագիր՝ 2.3-21) կետերում «քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերը փոխարինել «քաղաքաշինության և հողաշինարարության» բառերով.

6) 16-րդ (ծածկագիր՝ 2.3-16) և 17-րդ (ծածկագիր՝ 2.3-17) կետերից հանել «զարգացման ծրագրերի և» բառերը.

7) 24-րդ (ծածկագիր՝ 2.3-24) կետում «զարգացման ծրագրերի և գնումների» բառերը փոխարինել «ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերով.

8) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախումբը լրացնել նոր 25-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-25) և 26-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-26) կետերով.

9) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի 5-րդ (ծածկագիր՝ 3.1-5), 6-րդ (ծածկագիր՝ 3.1-6), 7-րդ (ծածկագիր՝ 3.1-7), 8-րդ (ծածկագիր՝ 3.1-8), 9-րդ (ծածկագիր՝ 3.1-9), 10-րդ (ծածկագիր՝ 3.1-10) կետերում «քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերը փոխարինել «քաղաքաշինության և հողաշինարարության» բառերով.

10) 22-րդ (ծածկագիր՝ 3.1-22) և 24-րդ (ծածկագիր՝ 3.1-24) կետերից հանել «զարգացման ծրագրերի և» բառերը.
11) 23-րդ (ծածկագիր՝ 3.1-23) և 25-րդ (ծածկագիր՝ 3.1-25) կետերում «զարգացման ծրագրերի և գնումների» բառերը փոխարինել «ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերով.
12) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին ենթախումբը լրացնել նոր 34-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-34), 35-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-35) և 36-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-36) կետերով.
13) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբի 13-րդ (ծածկագիր՝ 3.2-13), 14-րդ (ծածկագիր՝ 3.2-14), 15-րդ (ծածկագիր՝ 3.2-15), 16-րդ (ծածկագիր՝ 3.2-16) կետերում «քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման» բառերը փոխարինել «քաղաքաշինության և հողաշինարարության» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 229-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի N 05-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 05-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոխոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 230-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 203-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2024 թվականի համար հաստատելու մասին» N 203-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոխոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 231-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի փետրվարի 16-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 232-Ա/

Ավագանու անդամներ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ_____